Իրականացնում է ՀՀ և Եվրամիության միջև կնքված ԳՀՀ ներքո գործող Համագործակցության կոմիտեի, Առևտրի տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի նիստերի աշխատանքները և նիստերի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունները: Իրականացնում է Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Հայաստան-Եվրամիություն գործողությունների ծրագրի՝ Նախարարության իրավասությանը վերաբերող միջոցառումների իրականացման ընթացքի դիտանցման (մոնիտորինգ) աշխատանքները: Իրականացնում է Եվրամիության կողմից Հայաստանին շուկայական տնտեսության կարգավիճակ շնորհելու գործընթացի աշխատանքները:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն,

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 10.1 ենթակետին հաջորդող 2-րդ պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

* Եվրամիության հետ համագործակցության բնագավառում իրականացվող պետական քաղաքականությանը և գործընթացներին, ԵՄ կառույցներին, նրանց գործառույթներին և աշխատակարգերին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

* անգլերենի ազատ տիրապետում: